

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետ
Դիմաձևնոտային վիրաբուժության մասնագիտությամբ
Ասպիրանտուրայի քննության հարցաշար

1. Վիրաբուժական ստոմատոլոգիայում գործիքների և վիրակապական նյութերի ախտահանում և մանրէազերծում: Ասեպտիկա և անտիսեպտիկա:
2. Ամիդների խմբի տեղային անզգայացնող դեղանյութեր:
3. Տեղային անզգայացման կիրառման ցուցումները և հակացուցումները: Տարբեր խմբի հիվանդների համար անզգայացնող դեղանյութ ընտրելու սկզբունքները:
4. Ներսփռական, ենթավերնոսկրային, ներոսկրային, ինտրալիգամենտար և ներկակղանային անզգայացում:
5. Վերձնոտային նյարդի ճյուղերի նյարդավորման գոտիների հաղորդչական անզգայացում (ստորակնակապճային, քթաքմային, մեծ քմային անզգայացում):
6. Ստորձնոտային նյարդի ճյուղերի հաղորդչական անզգայացում (մանդիբուլյար, տորուսալ, կզակային, թշային, լեզվային):
7. Եովորյակ նյարդի երկրորդ և երրորդ ճյուղերի միաժամանակյա անզգայացում գանգի հիմի շրջանում ըստ Ս.Ն. Վայսբլատի:
8. Բերշեի եղանակով անզգայացում, Բերշե-Դուբովի եղանակով անզգայացում
9. Տեղային անզգայացման տեղային ընդհանուր բարդությունները:
10. Պրեմեդիկացիայի հիմնավորումը դիմաձևնոտային վիրաբուժության մեջ: Պրեմեդիկացիայի նպատակով առավել հաճախ օգտագործվող դեղանյութեր: Նեյրոլեպտանալգեզիան, աթառալգեզիան ամբուլատոր ստոմատոլոգիայում:
11. 11.Ընդհանուր անզգայացում: Առանձնահատկությունները դիմաձևնոտային շրջանի վիրահատությունների ժամանակ:
12. Դեղորայքային անաֆիլակտիկ շոկ: Առաջին բժշկական օգնությունը:
13. Սիրտ-թոքային վերակենդանացման սկզբունքները:
14. Ատամի հեռացման վիրահատության ցուցումները և հակացուցումները: Ատամի հեռացման համար նախատեսված գործիքները և մեթոդները: Ատամի բարդ հեռացման վիրահատություն:
15. Ատամի հեռացման ժամանակ և հետո առաջացող տեղային ընդհանուր բարդությունները:
16. Ատամի ձկթման հիվանդություններ: Կլինիկա, ախտորոշում, վիրաբուժական բուժման եղանակները:
17. Պերիոդոնտիտներ: Կլինիկա, ախտորոշում, վիրաբուժական բուժման եղանակները:
18. Պարոդոնտի հիվանդությունների վիրաբուժական բուժման եղանակները:

19. Մուկոզինգիվալ խնդիրների շտկման եղանակները (ֆրենուլոտոմիա, վեստիբուլոպլաստիկա, ռեցեսիաների վերացման եղանակները):
20. Ծնոտների սուր և քրոնիկական պերիոստիտներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
21. Ծնոտների սուր ատամնաձին օստեոմիելիտ: Կլինիկա, ախտորոշում բուժումը:
22. Քրոնիկ ատամնաձին օստեոմիելիտ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
23. Դիմաձնոտային շրջանի սուր օդոնտոգեն լիմֆադենիտներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
24. Դիմաձնոտային շրջանի քրոնիկական օդոնտոգեն լիմֆադենիտներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
25. Ստորին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների մակերեսային թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
26. Ստորին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների խորանիստ թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
27. Վերին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների մակերեսային թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
28. Վերին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների խորանիստ թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
29. Բերանի հատակի թարախա-նեկրոտիկ ֆլեգմոնի, Ժենսուլ-Լուդվիգի անգինա: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
30. Դեմքի ֆուրունկուլ և կարբունկուլ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
31. Դիմաձնոտային շրջանի թարախա-բորբոքային հիվանդությունների բարդությունները՝ մեդիաստենիտ, մենինգիտ, ուղեղի աբսցես, էթիոպաթոգենեզը, կլինիկական առանձնահատկությունները, տարածման ուղիները, բուժումը:
32. V. facialis-ի թրոմբոֆլևիտ, Sinus cavernosus-ի թրոմբոզ, էթիոպաթոգենեզը, կլինիկական առանձնահատկությունները, բուժումը:
33. Վերին ծնոտային ծոցի սուր ատամնաձին սինուսիտներ: Քրոնիկական ատամնաձին սինուսիտներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
34. Վերին ծնոտային ծոցի հատակի թափածակումներ և խողակներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
35. Թքագեղձերի հետազոտման եղանակները: Ենթաձնոտային թքագեղձի հեռացման ցուցումները, հակացուցումները, վիրահատման եղանակները:
36. Էպիդերմիկ սիալոդենիտներ, բարդությունները, բուժումը: Ոչ էպիդերմիկ սիալոդենիտներ, էթիոպաթոգենոզը, կլինիկան, բուժումը: Էպիդերմիկ և ոչ էպիդերմիկ սիալոդենիտների տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

37. Թքագեղձերի քրոնիկական բորբոքային հիվանդություններ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
38. Միալոզներ, Շեգրենի և Միկուլիչի հիվանդություններ, էթիոպաթոզենեզը, կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, բուժման եղանակները:
39. Թքաքարային հիվանդություն: Միալոդոխիտ, էթիոպաթոզենեզը, Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
40. Սպեցիֆիկ վարակներ՝ սիբիրյան խոց, տուբերկուլիոզ, էթիոպաթոզենեզը, կլինիկական առանձնահատկությունները, բուժումը:
41. Կարմիր քամի, նոմա, էթիոպաթոզենեզը, կլինիկական առանձնահատկությունները, բուժումը:
42. ՁԻԱՀ, էթիոպաթոզենեզը, արտահայտման ձևերը դիմաձնոտային շրջանում, բերանի խոռոչում, կլինիկան:
43. Դիմաձնոտային շրջանի փափուկ հյուսվածքների վնասվածքներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
44. Ատամների տեղախախտեր և կոտրվածքներ, ատամնաբնային ելունների կոտրվածքներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
45. Ստորին ծնոտի ոչ հրազենային կոտրվածքներ, դրանց դասակարգումը, առաջացման մեխանիզմները:
46. Ստորին ծնոտի կոտրվածքի կլինիկական պատկերը և պարակլինիկական հետազոտությունները:
47. Ստորին ծնոտի կոտրվածքի կոնսերվատիվ բուժումը, ժամանակավոր իմոբիլիզացիայի եղանակները:
48. Ստորին ծնոտի կոտրվածքի վիրաբուժական բուժման եղանակները, ցուցումները: Ստորին ծնոտի կոտրվածքի բուժումը արտաբերանային ապարատների միջոցով, եղանակները:
49. Ստորին ծնոտի վնասվածքից առաջացած բարդությունները, կլինիկան: Ասֆիկսիա, տեսակները, կլինիկան, բուժումը: Տրավմատիկ շոկ, կլինիկան, բուժումը:
50. Վերին ծնոտի կոտրվածքներ, հետազոտման եղանակները, կլինիկան: Լեֆոր 1, Լեֆոր 2, Լեֆոր 3:
51. Վերին ծնոտի կոտրվածքի բուժման կոնսերվատիվ և վիրաբուժական եղանակները: Վերին ծնոտի կոտրվածքի բուժումը Ադամսի եղանակով:
52. Քթի ոսկրերի կոտրվածքներ, դասակարգումը, կլինիկան: Քթոսկրերի ռեպոզիցիա, կատարման տեխնիկան, անզգայացումը: Քթային արյունահոսություն կոտրվածքի ժամանակ, բուժումը:
53. Այտային աղեղի և այտոսկրի կոտրվածքներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
54. Դիմաձնոտային շրջանի փափուկ հյուսվածքների հրազենային վնասվածքների առանձնահատկությունները և հիվանդների տարհանումը ռազմի դաշտից, փուլային բուժման սկզբունքները:
55. Տրավմատիկ օստեոմիելիտ, տարբերակում ոսկրային վերքի թարախակալման հետ, կլինիկան: Կեղծ հոդ, էթիոպաթոզենեզ, կլինիկան:

56. Տրավատիկ հայմորիտ, էթիոպաթոզենեզ, կլինիկական պատկեր, հետազոտման եղանակները:
57. Դիմաձևոտային շրջանի թերմիկ այրվածքներ, կլինիկան, բուժումը:
58. Դիմաձևոտային շրջանի համակցված վնասվածքներ, կլինիկան, բուժումը:
59. Ք.ս.ձ.հ. հիվանդությունների դասակարգումը, ախտորոշման եղանակները:
60. Ք.ս.ձ. հ. բորբոքային հիվանդություններ, արթորիտներ, էթիոլոգիան, կլինիկան, բուժումը:
61. Ք.ս.ձ. հ. օստեոարթրոզ, էթիոլոգիան, կլինիկան, բուժումը:
62. Ք.ս.ձ. հ. անկիլոզ, էթիոլոգիան, կլինիկան, բուժումը:
63. ՔՄԾ-հոդի ցավային դիսֆունկցիա: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
64. Եռվորյակ նյարդի ներիտ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
65. Եռորյակ նյարդի ներալգիա, լեզվաբնականային նյարդի ներալգիա, էթիոլոգիան, կլինիկան, բուժումը:
66. Դիմային նյարդի լուծանք՝ պարալիչ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
67. Աուրիկուլուտեմպորալ համախտանիշ, էթիոլոգիան, կլինիկան, բուժումը:
68. Պրոթեզավորման նախապատրաստման վիրահատություններ, կատարման տեխնիկան:
69. Ծնոտների ատամնաձին բշտեր: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
70. Ծնոտների ոչ ատամնաձին բշտեր: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
71. Դիմա-ձևոտային շրջանի փափուկ հյուսվածքների բարորակ նորագոյացություններ: Պապիլոմա, ֆիբրոմա, ֆիբրոմատոզ, լիպոմա, միոմա, Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
72. Դիմա-ձևոտային շրջանի անոթային ուռուցքներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
73. Դեմքի ոսկրերի մեզենխիմալ բարորակ նորագոյացություններ օստեոմա, օստեոիդ-օստեոմա, խոնդրոմա:
74. Դեմքի ոսկրերի մեզենխիմալ բարորակ նորագոյացություններ օստեոբլաստոկլաստոմա, միքսոմա, օսիֆիկացվող ֆիբրոմա): Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
75. Դեմքի ոսկրերի էկտոդերմալ մեզենխիմալ բարորակ ուռուցքներ (օդոնտոմա, ցեմենտոմա, ամելոբլաստոմա, օդոնտոզեն ֆիբրոմա): Կլինիկական ախտորոշումը և բուժումը:
76. Դիմային կմախքի ուռուցքանման ախտահարումներ (մոնոսալ ֆիբրոզ դիսպլազիա, պոլիոսալ ֆիբրոզ դիսպլազիա, Օլբրայթի համախտանիշ, խերուվիզմ, էոզիոնֆիլ գրանուլոմա): Կլինիկա, ախտորոշում, բուժում:
77. Ենթալեզվային և ենթաձևոտային թքագեղձերի ռետենցիոն կիստայի՝ ռանուլայի, կլինիկական նշանները և բուժումը:
78. Դերմոիդ կիստաների կլինիկական նշանները, ախտորոշումը, բուժումը:
79. Պարանոցի միջային կիստաների, խուղակների էթիոլոգիան, կլինիկական նշանները, վիրաբուժական բուժումը:
80. Պարանոցի կողմնային կիստաների կլինիկական նշանները, վիրաբուժական բուժումը:
81. Լիմֆանգիոմաների դասակարգումը, հիմնական կլինիկական նշանները, բուժումը:
82. Թքագեղձերի բարորակ նորագոյացություններ: Պոլիմորֆ ադենոմա, էթիոպաթոզենեզը, կլինիկան, բուժումը: Մոնոմորֆ ադենոմա, էթիոպաթոզենեզը, կլինիկան, բուժումը:
83. Օբլիգատ նախաքաղցկեղային վիճակներ, տեսակները, էթիոպաթոզենեզը, կլինիկան:
84. Ֆակուլտատիվ նախաքաղցկեղային վիճակներ, տեսակները, էթիոպաթոզենեզը, կլինիկան:

85. Պարանոցի և գլխի չարորակ նորագոյացություններ: Դասակարգումը և էթիոպաթոզները: Բարորակ և չարորակ նորագոյացությունների տարբերակիչ ախտորոշումը:
86. Ստորին ծնոտի քաղցկեղ, էթիոպաթոզները, կլինիկան, բուժումը: Ստորին ծնոտի սարկոմա, էթիոպաթոզները, կլինիկան, բուժումը:
87. Վերին ծնոտի քաղցկեղ, էթիոպաթոզները, կլինիկան, բուժումը: Վերին ծնոտի սարկոմա, առանձնահատկությունները, բուժումը:
88. Մաշկի չարորակ նորագոյացություններ, էթիոպաթոզները, կլինիկան, բուժումը:
89. Բերանի խոռոչի լորձաթաղանթի, շրթունքի և լեզվի չարորակ նորագոյացություններ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
90. Թքագեղձերի չարորակ նորագոյացություններ, էթիոպաթոզները, կլինիկան, բուժումը:
91. Գլխի և պարանոցի չարորակ ուռուցքների համակցված, կոմբինացված և համալիր բուժման հիմունքները: Պարանոցի ավշային համակարգի վրա կատարվող վիրահատություններ:
92. Ատամնային իմպլանտացիա: Ցուցումներ և հակացուցումներ: Ատամնային իմպլանտացիայի ժամանակ վիրահատությունների առանձնահատկությունները:
93. Ատամնային իմպլանտացիայում կիրառվող ոսկրափոխարինիչ նյութեր, դասակարգումը կիրառման ցուցումները: Ոսկրերի ուղղորդվող ռեգեներացիայի նպատակով կիրառվող թաղանթներ իմպլանտոլոգիայում:
94. Ատամնային իմպլանտացիայի ժամանակ լրացուցիչ վիրահատություններ փափուկ հյուսվածքների և ծնոտների ոսկրերի վրա:
95. Ատամնային իմպլանտացիայի ժամանակ հնարավոր բարդությունները և նրանց կանխարգելումը:
96. Դիմաձևոտային շրջանի դեֆեկտների և ձևախախտումների պլաստիկ վերականգնում, տեղային հյուսվածքներով, ոտիկի վրա լաթերով, հյուսվածքների ազատ փոխպատվաստմամբ: Ալլոտրանսպլանտացիա:
97. Ստորին ծնոտի զարգացման անոմալիաներ և ձևախախտումներ: Կլինիկա, ախտորոշում և վիրահատական բուժում:
98. Վերին ծնոտի զարգացման անոմալիաներ և ձևախախտումներ: Կլինիկա, ախտորոշում և վիրահատական բուժում:
99. Շրթունքների բնածին արատների դասակարգումը: Խելյուպաստիկա:
100. Քիմքի բնածին արատների դասակարգումը: Ուրանոպլաստիկա

Գրականություն

«Վիրաբուժական ստոմատոլոգիա և դիմաձևոտային վիրաբուժություն» ուսունական ձեռնարկ

Պրոֆեսոր Գ. Վ. Հակոբյանի խմբագրությամբ